



ԼՂՀ վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2012թ. մարտի 7-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ Առաջին ատյանի դատարանի 2011թ. դեկտեմբերի 30-ի վճիռը թողել անփոփոխ:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ 2012թ. ապրիլի 4-ին վճռաբեկ բողոք է ներկայացրել պատասխանող Էդուարդ Դավթյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել հայցվոր Նաիրա Դավթյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքերով:

Բողոքաբերը գտնում է, որ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 47-րդ հոդվածի, 49-րդ և 50-րդ հոդվածների պահանջները, ճիշտ գնահատական չի տվել գործում առկա ապացույցներին, չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 5-րդ մասի և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասի ու 231-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 5-րդ կետերի պահանջները, որի պատճառով էլ օրինական ուժի մեջ է թողել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին չհամապատասխանող վճիռը:

Բողոք բերած անձը նշված պնդումները պատճառաբանել է նրանով, որ Առաջին ատյանի դատարանը ճիշտ գնահատական չի տվել գործով առկա ապացույցներին և կայացրել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող վճիռ, իսկ Վերաքննիչ դատարանը օրենքների պահանջներին հակառակ, անտեսելով գործում առկա ապացույցները, եզրահանգել է այն համոզման, որ հայցվոր կողմը ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա հանդիսանում է Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 30 տան և հողամասի համասեփականատերը՝ 1/2 փայաբաժնով, առանց հաշվի առնելու, որ նշված վկայագրում հիշատակված Սպանդարյան փողոցի թիվ 28 հասցեում գտնվող անշարժ գույքի հետ ոչ մի կապ չունի նույն փողոցի թիվ 30 հասցեում գտնվող անշարժ գույքը և, որ նշված վկայագրում առկա է օրենքի պահանջներին հակառակ ջնջում և ուղղում:

Վերաքննիչ դատարանը, որպես բողոքի մերժման հիմք, նշել է նոտարի կողմից 2004թ. մարտի 17-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը: Որոշման համաձայն՝ ժառանգական գույքը, ըստ վկայագրի, բաղկացած է 1/2 բաժին բնակելի տնից և հողամասից, որը գտնվում է Սպանդարյան փողոցի թիվ 28 հասցեում, այդ բնակելի տունը ներկայումս կրում է Սպանդարյան փողոցի թիվ 30 համարը, կադաստրի մարմնում այդ գույքի նկատմամբ Նաիրա Դավթյանի իրավունքը գրանցված չէ:

Վերաքննիչ դատարանը, գործում առկա ապացույցների ոչ ճիշտ գնահատման պատճառով, հաշվի չի առել այն կարևոր հանգամանքը, որ նշված վկայագիրը տալու պահի դրությամբ, Սպանդարյան փողոցի Գարեգին Դավթյանին պատկանող՝ 1975 թվականից Սպանդարյան 28 և 28ա երկու տարբեր հասցեների բաժանված բնակելի տները, արդեն իսկ կրում էին թիվ 30 և 30ա համարները, իսկ Սպանդարյան փողոցի թիվ 28 բնակելի տունը պատկանում էր միանգամայն այլ քաղաքացու: Այդ է վկայում նաև վկայագրում առկա անշարժ գույքի համարի ուղղումը:

Ստորադաս դատարաններն իրենց դատական ակտերում հիմք են ընդունել, որ վերոնշյալ վկայագիրը տրվել է 2004թ. մարտի 17-ի դրությամբ գոյություն ունեցող Սպանդարյան 28 տան ժառանգական գույքի նկատմամբ, որը ոչ մի կապ չունի նախկին Սպանդարյան 28 և ներկայիս Սպանդարյան 30 տան հետ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն փաստը, որ հայցվորուհու պահանջը վերաբերում է Սպանդարյան 30 (նախկին 28) տան 1/2 մասին, վկայագիրը վերաբերում է 2004թ. մարտի 17-ի դրությամբ Սպանդարյան 28 համարը կրող անշարժ գույքի 1/2 մասին, իսկ դատարանը սեփականության իրավունքը ճանաչել է Սպանդարյան փողոցի ներկայիս թիվ 30 բնակելի տան 1/2 մասի նկատմամբ: Նույնիսկ, եթե ընդունել նշվածը, ապա որպես նվեր ինքը ստացել է 100մ<sup>2</sup> շինություն, իսկ ներկայումս շինության մակերեսը կազմում է 157,86 մ<sup>2</sup>:

Բողոքաբերը համոզված է, որ նշված վկայագիրը Ն.Դավթյանի հայցադիմումի բավարարման և իր վերաքննիչ բողոքի մերժման համար վերաբերելի ապացույց համարվել չի կարող, քանի որ այն տրված է այլ անշարժ գույքի նկատմամբ, և անշարժ գույքի համարի ուղղումը օրենքով սահմանված կարգով վավերացված չէ:

Գտնում է, որ Վերաքննիչ դատարանը պետք է հիմք ընդունելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները և օգտվելով նույն օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով վերապահված իր լիազորությունից, քաղաքացիական գործի վարույթը Ն.Դավթյանի սեփականության իրավունքի ճանաչման մասով կարճեր, իսկ իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու մասով, վերադարձներ նույն դատարան՝ նոր քննության համար:

Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանի որոշումն իր համար առաջացրել է ծանր հետևանքներ, Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառման համար:

Վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մարտի 7-ի որոշումը, փոփոխել այն, կայացնելով նոր դատական ակտ՝ հայցապահանջը մերժելու մասին, կամ գործի վարույթը՝ սեփականության իրավունքը ճանաչելու մասով կարճել, իսկ իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու մասով վերադարձնել ԼՂՀ վարչական դատարան:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.**

Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան 28ա բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ Ռուբիկ Դավթյանին տրված N 2742 տեխնիկական անձնագրով հաստատվում է, որ նշված տունը դեռևս 1975թ. հունվարի 15-ին պատկանում էր Ռուբիկ Դավթյանին, ինչի մասին նշում է կատարված անձնագրի մեջ առկա քարտում և հատակագծում: Հետևաբար, պատասխանող կողմի դիրքորոշումը առ այն, որ Սպանդարյան 30ա՝ նախկին 28ա, անշարժ գույքը հանդիսանում է ներկայիս Սպանդարյան 30՝ նախկին 28 անշարժ գույքի 1/2 մասը, հիմնագուրկ է:

Պատասխանող կողմը փորձում է մոլորության մեջ գցել դատարանին և շարունակում է պնդել, որ Սպանդարյան փողոցի թիվ 30ա բնակելի տունը կազմում է նախկին թիվ 28 տան մի մասը:

Հայցվոր Ն.Դավթյանը խնդրել է մերժել վճռաբեկ բողոքը:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 1956թ. օգոստոսի 25-ի N88 պայմանագրի համաձայն՝ Ստեփանակերտի քաղաքային սովետի գործկոմի 10.08.1956թ. որոշման հիման վրա Գարեգին Ղազարի Դավթյանին անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրվել է Մայիսի 1-ի N 30 հասցեով հաշվառված 442 մ<sup>2</sup> մակերեսով հողակտորը՝ 12.02.1948թ. հաստատած N147-1 նախագծի

համաձայն 36 մ<sup>2</sup> մակերեսով երկու սենյակից բաղկացած երկու հարկանի քարե տուն կառուցելու համար /գ.թ.5, 49/:

2. 1962թ. դեկտեմբերի 13-ին նշված անշարժ գույքը գրանցվել է 190 ինվենտարիզացիոն /գույքագրման/ համարի տակ և Սպանդարյան 28 հասցեով: Կադաստրային գործում առկա է տվյալ տեխնիկական անձնագրի միայն առաջին /տիտղոսային/ թերթը /գ.թ.42, կադաստրային գործ N4-54/3155, թ.24/:

3. 1974թ. հունվարի 15-ին թվագրված տեխնիկական ինվենտարիզացիայի քարտում գրված է, որ Ռ.Դավթյանին պատկանող Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան 28ա հասցեով տեղակայված տնատիրությունը կառուցված է 1971թ. և բաղկացած է երկու հարկանի բնակելի տնից՝ 46,3մ<sup>2</sup> մակերեսով ու 1մ<sup>2</sup> մակերեսով սանհանգույցից: Այգու և բակի մակերեսը նշված է 176,7մ<sup>2</sup>: Ընդամենը հողամասի մակերեսը նշված է 221,0մ<sup>2</sup>, որի վրա շինությունների մակերեսը՝ 47,3մ<sup>2</sup>: Քարտում այլ թանաքով լրացված է, որ տնատիրությունը պատկանում է Ռուբիկ Գարեգինի Դավթյանին 1975թ. փետրվարի 5-ի նվիրատվության պայմանագրի հիման վրա: Նույնաբովանդակ քարտ 2742 համարակալմամբ լրացվել էր նաև 15.01.1975թ. /կադաստրային գործ N4-9/0556, թ.14, 31/:

4. 1975թ. հունվարի 15-ի N549 հողային գրության համաձայն՝ սեփականության իրավունքով Գարեգին Ղազարի Դավթյանին էր պատկանում Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան 28 հասցեով գտնվող 148,3մ<sup>2</sup> մակերեսով բնակելի տունը և 293,7մ<sup>2</sup> մակերեսով այգին ու բակը, ընդամենը՝ 442մ<sup>2</sup> /գ.թ.46, կադաստրային գործ N4-54/3155, թ.20/:

5. 1975թ. հունվարի 15-ի Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան 28 հասցեով գտնվող «տան բարեկարգում» անվանված փաստաթղթերում նույն տնատիրությունում առանձին նշված է 6,15մx7.6մ /46.3մ<sup>2</sup>/ մակերեսով շինություն /բնակելի տուն/ և 1մ<sup>2</sup> մակերեսով սանհանգույց՝ ընդամենը 47,3մ<sup>2</sup>, որոնք տեղակայված են 221մ<sup>2</sup> հողակտորի վրա: Տնատիրության մյուս մասը շտրիխավորված է /կադաստրային գործ N4-9/0556, թ.22-24/:

6. Նույն մակերեսով շինությունը նույն օրը ձևակերպված «հիմնական շինությունների համահարկ նախագիծ» անվանված փաստաթղթերում նշված է որպես երկու հարկից բաղկացած բնակելի տուն: Ընդ որում, իբրև բնակելի տան հասցե նշած է Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան 28ա հասցեն /կադաստրային գործ N4-9/0556, թ.18-21/:

7. 1975թ. հունվարի 24-ին Գարեգին Ղազարի Դավթյանին նվիրատվության պայմանագիր կնքելու համար տրամադրվել է տեխնիկական ինվենտարիզացիայի բյուրոյի N 0-214 տեղեկանքը, համաձայն որի՝ ամբողջությամբ նրան էր պատկանում 442մ<sup>2</sup> մակերեսով հողակտորը, որի վրա տեղակայված էր 1957/71թ. կառուցված երկու հարկանի 243մ<sup>2</sup> օգտակար մակերեսով տուն, որից 60մ<sup>2</sup> բնակելի մակերեսն է: Այն գնահատված էր 3383 ռուբլի /կադաստրային գործ N4-54/3155, թ.19/:

8. Համաձայն 1975թ. փետրվարի 5-ի նվիրատվության պայմանագրի (ռեեստրի համար 2/1167) Գարեգին Ղազարի Դավթյանը իրեն պատկանող Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան 28 հասցեով գտնվող երկու հարկանի տնատիրության 1/2 փայաբաժինը՝ 30մ<sup>2</sup> բնակելի տարածքով, տեղակայված 200մ<sup>2</sup> հողակտորի վրա և 1500 ռուբլի արժողությամբ նվիրել է իր որդի՝ Ռուբիկ Գարեգինի Դավթյանին /գ.թ.44, կադաստրային գործ N4-9/0556, թ.29/:

9. Համաձայն 1975թ. փետրվարի 5-ի նվիրատվության պայմանագրի (ռեեստրի համար 2/1168)՝ Գարեգին Ղազարի Դավթյանը իրեն պատկանող Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան 28 հասցեով գտնվող երկու հարկանի տնատիրության 1/2 փայաբաժինը 30մ<sup>2</sup> բնակելի տարածքով, տեղակայված 242մ<sup>2</sup> հողակտորի վրա և 1883 ռուբլի արժողությամբ նվիրել է իր որդի՝ Էդուարդ Գարեգինի Դավթյանին /գ.թ.45, կադաստրային գործ N4-54/3155, թ.21/:

10. 1975թ. փետրվարի 5-ի N556 հողային գրության համաձայն՝ սեփականության իրավունքով Ռուբիկ Գարեգինի Դավթյանին էր պատկանում Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան 28ա հասցեով գտնվող 47,3մ<sup>2</sup> մակերեսով բնակելի տունը և 152,7մ<sup>2</sup> մակերեսով այգին ու բակը, ընդամենը՝ 200մ<sup>2</sup>: Հիմքը՝ 1975թ. փետրվարի 5-ի նվիրատվության պայմանագիր /կադաստրային գործ N4-9/0556, թ.13/:

11. 1975թ. փետրվարի 5-ով թվագրված տնատիրության գնահատման քարտում գրված է, որ Ռուբիկ Գարեգինի Դավթյանին պատկանող Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան 28ա հասցեով տեղակայված տնատիրությունը կառուցված է 1971թ., բաղկացած է 4 սենյակից, երկու հարկանի է, բնակելի տան մակերեսը 46,3մ<sup>2</sup> է, առկա է նաև սանհանգույց, ընդհանուր գնահատվել է 1897 ռուբլի /կադաստրային գործ N4-9/0556, թ.17/:

12. Համաձայն 2004թ. մարտի 17-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Ռուբիկ Գարեգինի Դավթյանի գույքի ժառանգ է հանդիսացել կինը՝ Նաիրա Դավթյանը: Ժառանգական գույքը, որի համար տրված էր վկայագիրը, բաղկացած էր 1/2 փայաբաժին բնակելի տնից և հողամասից, որը գտնվում է Սպանդարյան փողոցի թիվ 28 հասցեով: Ընդ որում վկայագրի սկզբնական /տպագրված/ տեքստում նշված էր Սպանդարյան փողոցի թիվ 30 հասցեն, սակայն գրչով ուղղում կատարելու միջոցով նշվել է Սպանդարյան փողոցի թիվ 28 հասցեն /գ.թ.17, կադաստրային գործ N4-9/0556, թ.33/:

13. 2004թ. ապրիլի 9-ին Ստեփանակերտի քաղաքապետի կողմից որոշվել է «բավարարել Սպանդարյան փողոցի թիվ 30ա տան բնակչուհի Նաիրա Դավթյանի խնդրանքը և օրինականացնել նշված տան կից 8,56 քառ.մ մակերեսով կցակառույցը և ընդարձակել հողամասը 42 քառ.մ մակերեսով, ըստ կցվող հատակագծի: Ընդարձակելուց հետո հողամասի ընդհանուր մակերեսը կկազմի 242 քառ.մ» /որոշում N268/: Կցված հատակագծում նշված է «Սպանդարյան փողոցի թիվ 30 տան կցակառույցի օրինականացման և հողամասի ընդարձակման սահմանները», իսկ տնատիրության հատակագծում արտացոլված է երկու փայաբաժիններ: Ընդ որում, մեկ փայաբաժինը շտրիխավորված է, իսկ մյուսը՝ նշված է որպես Սպանդարյան փողոցի թիվ 28 տուն, 200մ<sup>2</sup> մակերես հողակտորով, որի վրա առկա է 6,09մx15,4մ բնակելի տուն: Հատակագիծը ստորագրված է գլխավոր ճարտարապետի և ինժեներ հողաշինարարի կողմից /գ.թ.13, կադաստրային գործ N4-9/0556, թ.34/:

14. 2004թ. մայիսի 3-ին Նաիրա Սուրենի Դավթյանին տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N020417 վկայական՝ «Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան փող. թիվ 30ա բնակելի տան նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի առ 17.03.2004թ., Ստեփանակերտի քաղաքապետի որոշման N268 առ 09.04.2004թ. հիման վրա» /կադաստրային գործ N4-9/0556, թ.46-48/:

15. Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան 30 տան /Էդուարդ Դավթյանի անվամբ/ N4-54/3155 կադաստրային գործում /թ.60-74/ առկա N28513 առ 18.02.2011թ. շինարարատեխնիկական փորձաքննության եզրակացության համաձայն՝

- «Էդուարդ Գարեգինի Դավթյանի անվամբ թիվ 190 առ 1975թ. տեխնիկական անձնագրի բարեկարգում բաժնի հողամասի հատակագիծն ունի ուղղանկյունաձև տեսք՝ 16.0մx29.5մ ընդհանուր չափեր, որի ընդհանուր մակերեսը կկազմի 472մ քառակուսի: Նշված հատակագծի առանց շտրիխների մասն ունի նույնպես ուղղանկյունաձև տեսք՝ 9.0մx26.9մ չափերով, որի մակերեսը կազմում է 242մ քառակուսի»:

- «Ռուբիկ Գարեգինի Դավթյանի անվամբ թիվ 2742 առ 1975թ. տեխնիկական անձնագրի բարեկարգում բաժնի հողամասի հատակագծի առանց շտրիխների մասի /իրեն պատկանող/ մակերեսը կազմում է 221մ քառակուսի: Տվյալ հատակագծում գրառված չափերով նշված հատակագծի մակերեսը կազմում է 212.2մ քառակուսի /6.15x29.5+11.85x2.6/»:

16. 2011թ. մարտի 31-ի N 0257/05/2010թ. վարչական գործով կայացված վճռի համաձայն՝ մերժվել է «Նաիրա Սուրենի Դավթյանի հակընդդեմ հայցը ընդդեմ Էդուարդ

Գարեգինի Դավթյանի, ԼՂՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ իրավունքների պետական գրանցման միասնական 4-54 մատյանի 108356 համարի տակ 2010թ. փետրվարի 8-ին Էդուարդ Դավթյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի գրանցումը՝ առոչինչ ճանաչելու պահանջի մասին» /կադաստրային գործ N4-9/0556 թ.61-64, կադաստրային գործ N4-54/3155 թ.42-49/:

17. Սույն գործով 2011թ. դեկտեմբերի 30-ին կայացված վճռի համաձայն՝ ճանաչվել է Նաիրա Սուրենի Դավթյանի սեփականության իրավունքը Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 30 բնակելի տան 1/2 մասի նկատմամբ: Մասնակի անվավեր է ճանաչվել ԼՂՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ իրավունքների պետական գրանցման միասնական 4-54 մատյանի 108356 համարի տակ 2010թ. փետրվարի 8-ին Էդուարդ Դավթյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի գրանցումը՝ Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 30 բնակելի տան 1/2 մասի նկատմամբ:

18. Գործում առկա Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 28 բնակելի տան վերաբերյալ 1988թ. տեխնիկական անձնագրի պատճենի համաձայն՝ բնակելի տունը պատկանում է Էդուարդ և Ռուբիկ Դավթյաններին՝ 1/2-ական փայաբաժիններով /գ.թ.8/:

#### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի համաձայն՝

գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1) գրավոր և իրեղեն ապացույցներով, 2) փորձագետների եզրակացություններով, 3) վկաների ցուցմունքներով, 4) գործին մասնակցող անձանց ցուցմունքներով: Օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա: Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով ապացույցի հասկացությունը, սպառիչ սահմանել է դրանց տեսակները, այն է՝ գրավոր և իրեղեն ապացույցները, փորձագետների եզրակացությունները, վկաների ցուցմունքները, գործին մասնակցող անձանց ցուցմունքները: Ընդ որում, գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Դատարանը յուրաքանչյուր ապացույց պետք է գնահատի գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ ու պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին:

Յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով պարզման ենթակա են հետևյալ իրավական հարցադրումները. որ փաստերն են հաստատված դատական նիստում հետազոտված ապացույցներով, որոնք են գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, որ կողմը պետք է կրի այդ փաստերի ապացուցման դատավարական բեռը և հաստատված են արդյոք թույլատրելի և վերաբերելի ապացույցներով դատական ակտ կայացնելու հիմք հանդիսացած գործի հանգամանքները:

Նշված իրավական հարցադրումներին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզել հետևյալ փաստական հանգամանքները.

1) Մինչև 1975թ. փետրվարի 5-ը՝ նվիրատվության պայմանագիր կնքելը, տվյալ ժամանակահատվածում գործող կանոններին համապատասխան առանձնացված էր արդյոք Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան 28ա հասցեով գտնվող տնատիրությունը և արդյոք այն մինչև նվիրատվության պայմանագիր կնքելը պատկանում էր Ռուբիկ Դավթյանին:

2) 2004թ. մարտի 17-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը որ բնակելի տան և հողամասի 1/2 փայաբաժնին է վերաբերվում:

Առաջին ատյանի դատարանը 2011թ. դեկտեմբերի 30-ի վճռում հայցը բավարարելու հիմք է ընդունել և նշել, որ «Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 28ա բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ Ռուբիկ Դավթյանին տրված N2742 տեխնիկական անձնագրով հաստատված է համարում, որ նշված տունը դեռևս 1975թ. հունվարի 15-ին, այսինքն մինչև նվիրատվության պայմանագիր կնքելը, պատկանում էր Ռուբիկ Դավթյանին, ինչի մասին նշում է կատարված անձնագրի մեջ առկա քարտի և հատակագծի մեջ: ...Դեռևս 1975թ. հունվարի 15-ին Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան 28ա տունն ուներ առանձին հասցե և առանձին տեխնիկական անձնագիր»: Առաջին ատյանի դատարանը հանգել է նաև այն հետևության, որ նվիրված անշարժ գույքի մեջ ներառված չի եղել ներկայիս Սպանդարյան փողոցի թիվ 30ա բնակելի տունը: Վճռում նույնպես նշվել է, որ ըստ օրենքի ժառանգության իրավունքի առ 2004թ. մարտի 17-ի վկայագրի, Ն.Դավթյանը ընդունել է իր ամուսնու՝ Ռ.Դավթյանի մահից հետո բացված ժառանգությունը՝

Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 30 (նախկին 28) բնակելի տան և տնամերձ հողամասի 1/2 բաժնեմասի նկատմամբ:

Վերաքննիչ դատարանը, մերժելով պատասխանող Է.Դավթյանի վերաքննիչ բողոքը, իր որոշումը պատճառաբանել է նրանով, որ «Ստեփանակերտի պետական նոտարական գրասենյակի պետական նոտարը... 2004 թվականի մարտի 4-ին տվել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, համաձայն որի՝ Նաիրա Դավթյանը, հանդիսանում է իր հանգուցյալ ամուսնու՝ ժառանգատու Ռուբիկ Դավթյանի ժառանգը: Ժառանգական գույքը, որի համար տրվել է վկայագիրը, բաղկացած է «1/2 փայաբաժին բնակելի տնից և հողամասից, որը գտնվում է Սպանդարյան փողոցի 28 հասցեում»: Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 28 բնակելի տունը ներկայումս կրում է թիվ 30 համարը: ...Այսպիսով, ժառանգության իրավունքի վերոնշված վկայագրով արդեն իսկ հավաստված /ճանաչված/ է վեճի առարկա գույքի նկատմամբ Նաիրա Դավթյանի ժառանգության /սեփականության/ իրավունքը: Վկայագրում նշված գույքի նկատմամբ Նաիրա Դավթյանի իրավունքները պետական գրանցում չեն ստացել»: Վերաքննիչ բողոքի մյուս փաստարկներին Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել:

Գերագույն դատարանը Վերաքննիչ դատարանի նշված եզրահանգումները համարում է անհիմն և հակասական, քանի որ նշված վկայագիրը հիմք է ծառայել Նաիրա Դավթյանի անվամբ N020417 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 2004թ. մայիսի 3-ի վկայականի, իսկ գործում առկա ապացույցներով հաստատված չէ այն հանգամանքը, որ Նաիրա Դավթյանի կողմից ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո նշված անշարժ գույքի հասցեն փոխվել է:

Գերագույն դատարանն անհիմն է համարում նաև Առաջին ատյանի դատարանի այն հետևությունը, որ նվիրված անշարժ գույքի մեջ ներառված չի եղել ներկայիս Սպանդարյան փողոցի թիվ 30ա բնակելի տունը, քանի որ դատաքննությամբ պարզված չէ, թե որ անշարժ գույքին է վերաբերում 1975թ. հունվարի 24-ին Գարեգին Ղազարի Դավթյանին նվիրատվության պայմանագիր կնքելու համար տրամադրված տեխնիկական գույքագրման բյուրոյի N 0-214 տեղեկանքում նշված և ամբողջությամբ նրան պատկանող 442մ<sup>2</sup> մակերեսով հողակտորը ու 1957/71թ. կառուցված երկու հարկանի 243մ<sup>2</sup> օգտակար մակերեսով տունը, որից 60մ<sup>2</sup> բնակելի մակերեսն էր: Պարզված չէ՝ արդյոք, նշված անշարժ գույքը 05.02.1975 թվականից մինչ այսօր լրիվությամբ տիրապետվում է Է.Դավթյանի կողմից, թե այն բաժանվել էր երկու եղբայրների միջև:

Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի վճռում նշված եզրահանգմանը, որ N2742 տեխնիկական անձնագրով հաստատված է, որ նշված տունը դեռևս 1975թ. հունվարի 15-ին, այսինքն մինչև նվիրատվության պայմանագիր կնքելը, պատկանում էր Ռուբիկ Դավթյանին, ինչի մասին նշում է կատարված անձնագրի մեջ առկա քարտի և հատակագծի մեջ, ապա նշված փաստաթղթերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ սույն գործում առկա փաստաթղթերում, այդ թվում նաև վճռում նշված նույնաբովանդակ քարտերում, թվագրված 1974թ. հունվարի 15-ով, 1975թ. հունվարի 15-ով, 1975թ. փետրվարի 5-ով նշված է, որ տնատիրությունը պատկանում է Ռուբիկ Գարեգինի Դավթյանին 1975թ. փետրվարի 5-ի նվիրատվության պայմանագրի հիման վրա (տես սույն որոշման կետ 3.3, 3.5 և 3.11):

Գերագույն դատարանը, սույն քաղաքացիական գործում եղած բոլոր ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության ենթարկելով, արձանագրում է, որ դատական նիստում հետազոտված ապացույցներով չեն պարզվել և վիճելի են մնացել հետևյալ փաստական հանգամանքները.



- մինչև 1975թ. փետրվարի 5-ը ինչ փաստաթղթի հիման վրա էր Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան 28ա հասցեով գտնվող տնատիրությունը պատկանում Ռուբիկ Դավթյանին և առկա էր արդյոք նշված հասցեով առանձին միավոր անշարժ գույք,

- 1975թ. հունվարի 24-ին Գարեգին Դավթյանին նվիրատվության պայմանագիր կնքելու համար տրամադրված տեխնիկական գույքագրման բյուրոյի N 0-214 տեղեկանքում նշված 442<sup>2</sup> մակերեսով հողակտորի և դրա վրա տեղակայված 1957/71թ. կառուցված երկու հարկանի 243մ<sup>2</sup> օգտակար մակերեսով տան մեջ ներառված էր արդյոք վճռում նշված Ռուբիկ Դավթյանի անվամբ լրացված քարտերում նկարագրված անշարժ գույքը,

- 2004թ. մարտ-ապրիլ ամիսներին վեճի առարկա գույքը որ հասցեով էր գրանցված և ինչու 2004թ. ապրիլի 9-ի Ստեփանակերտի քաղաքապետի N268 որոշման և կից հաստակագծում նույն տնատիրությունը նշված է Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան 30ա, Սպանդարյան 30 և Սպանդարյան 28 հասցեներով (տես սույն որոշման կետ 3.13 ),

- ինչու 2004թ. մարտի 17-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրում նշված լինելով Սպանդարյան փողոցի թիվ 28 հասցեն, 2004թ. մայիսի 3-ին Նաիրա Դավթյանին նույն ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N020417 վկայական՝ Ստեփանակերտ քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 30ա բնակելի տան նկատմամբ (տես սույն որոշման կետ 3.12 և 3.14):

Գերագույն դատարանը գտնում է, որ նշված հանգամանքները պարզելուց հետո միայն հնարավոր կլինի կայացնել օրինական և հիմնավորված դատական ակտ, իսկ դրանք պարզելու համար սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է իրականացնել նոր քննություն:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանի վճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված: Դատարանը վճիռը հիմնավորում է միայն դատական նիստում հետազոտված ապացույցներով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, ԼՂՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Գերագույն դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ կայացրած որոշման իրավական հիմնավորումը: Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմերի, որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին:

Գերագույն դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չեն հետազոտվել պատասխանողների ներկայացուցիչների վկայակոչած փաստերը, ինչի արդյունքում թույլ է տրվել դատավարական իրավունքի նորմերի՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ, 47-րդ, 49-րդ և 121-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծման:

Նման հանգամանքներում, Գերագույն դատարանը վճռաբեկ բողոքի նյութական իրավունքի նորմերի խախտման հիմքերին չի անդրադառնում, քանի որ առանց վերը նշված փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հնարավոր չէ ճիշտ իրավական գնահատական տալ նշված հարցերին:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքերի առկայությունը, Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Պատասխանող Էդուարդ Գարեգինի Դավթյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2012թ. մարտի 7-ի որոշումը և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ  
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**